Մշակույթ և աուդիովիզուալ քաղաքականություն

1.1. Մշակույթ

Մշակույթի բնագավառում ԵՄ օրենսդրության շրջանակներում քննարկվում է «Մշակույթ-2000» համայնքային ծրագիրը: «Մշակույթ-2000» ծրագիրը հովանավորում է գեղարվեստական և մշակութային ծրագրերը, որոնք իրականացվում են եվրոպական մասշտաբով և՛ իրենց կոնցեպտուալ, և՛ ծրագրի կազմակերպման ու ծրագրին մասնակցելու առումով: Այդ միջոցառումները ներառում են փառատոներ, համատեղ միջոցառումներ, մաստերկլասներ, ցուցահանդեսներ, գեղարվեստական ստեղծագործություններ, շրջագայություններ ու կոնֆերանսներ:

Մշակույթի բնագավառում ԵՄ օրենսդրությունը չի նախատեսում ակտեր, որոնք պարտադիր են անդամ պետությունների համար: Այդ իսկ պատճառով այս բնագավառում ՀՀ օրենսդրությունը ենթակա չէ համապատասխանեցման ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

1.2. Աուդիովիզուալ քաղաքականություն

Ներածություն

Աուդիովիզուալ քաղաքականության բնագավառում ԵՄ օրենսդրությունն ընդգրկում է մի շարք փաստաթղթեր, որոնք նվիրված են հեռարձակման ոլորտում միասնական շուկայի ստեղծմանը, բարձր հստակության հեռուստատեսությանը, ինչպես նաև Մեդիա ծրագրերին (Աուդիովիզուալ արդյունաբերության զարգացումը խրախուսելու միջոցառումներ) և այլն, որոնք ենթակա չեն համապատասխանեցման:

Աուդիովիզուալ քաղաքականության բնագավառում համապատասխանեցման ենթակա ԵՄ իրավական ակտը վերաբերում է հեռուստատեսությանը: Այս բնագավառին առնչվող ՀՀ օրենսդրությունը բազմաթիվ իրավահարաբերությունների կարգավորմամբ տարբերվում է ԵՄ օրենսդրությունից: Մասնավորապես, բացակայում է այնպիսի իրավահարաբերությունների կարգավորումը, ինչպիսին հեռուստաառևտուրն է և այլն:

Թեև ՀՀ օրենսդրությունը, մասնավորապես «Գովազդի մասին» ՀՀ օրենքը[1], դրույթներ է ներառում ալկոհոլի և ծխախոտի գովազդի մասին, դրանք, այնուամենայնիվ, իրենց կարգավորմամբ և կարգավորման մոտեցումներով տարբեր են ԵՄ օրենսդրությունից: Օրինակ՝ ԵՄ օրենսդրությամբ արգելվում է ծխախոտի գովազդը: Մինչդեռ ՀՀ օրենսդրությունը, թեև որոշակի սահմանափակումներով, այնուամենայնիվ, թույլատրում է ծխախոտի գովազդը:

Առանձին ուշադրության է արժանի նաև հեռուստատեսության բնագավառում հովանավորությունը: Այսպես, ՀՀ օրենսդրության մեջ բացակայում է այնպիսի կարևորագույն դրույթ, համաձայն որի՝ արգելվում է հովանավորությունը այնպիսի կազմակերպությունների կողմից, որոնց հիմնական գործունեությունը կապված է ալկոհոլի կամ ծխախոտի արտադրության, վաճառքի և այլնի հետ:

2007 թվական

Այս ոլորտի օրենսդրական բացերը լրացնելու, գովազդին առնչվող և այլ խնդիրներ ԵՄ պահանջներին համապատասխան կանոնակարգելու նպատակով համապատասխանեցման ենթակա է Խորհրդի 1989թ. հոկտեմբերի 3-ի թիվ 89/552 դիրեկտիվը[2]:

Այդ նպատակով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», ինչպես նաև «Գովազդի մասին» ՀՀ օրենքներում:

---

[1] ՀՕ-55, 30.04.1996թ.:

[2] 1989թ. հոկտեմբերի 3-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 89/552՝ «Անդամ պետություններում օրենքներով, կանոնակարգերով կամ վարչական գործողություններով սահմանվող հեռուստահաղորդակցային գործողությունների վերաբերյալ որոշակի դրույթների համակարգման մասին»:

1.1.1 Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
2007						
1.	• «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում • «Գովազդի մասին» ՀՀ օրենքում փոփոխութուններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	1989թ. հոկտեմբերի 3-ի «Անդամ պետություններում օրենքներով, կանոնակարգերով կամ վարչական գործողություններով սահմանվող հեռուստահաղորդակցային գործողությունների վերաբերյալ որոշակի դրույթների կոորդինացման մասին» Խորհրդի թիվ 89/552 դիրեկտիվ	ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով	2-րդ եռամսյակ	27	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					27	

1.1.2 Ինստիտուցիոնալ կարողություններ

0	1	2	3	4
NN p/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով	-	Աուդիովիզուալ քաղաքականության վերաբերյալ դասընթաց (5 օր/2007թ.)	Խորհրդատվություն